ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ջրվեժի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Ջրվեժ համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտ բետոնե ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի սեպտեմբերի 24-ին կնքած «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-20/15» պայմանագրում 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Համապատասխան ֆինանսական միջոցների հատկացում, գնումների պլանում կատարված փոփոխությունը հրապարակվել է 16.10.2020թ.-ին:

Փոփոխության նկարագրություն: Լրացուցիչ հանձայնագրի կնքում՝ «Օրացույցային գրաֆիկի» և «Վճարման ժամանակացույց»-ի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասեր, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 18-րդ կետ:

Պատվիրատու՝ Ջրվեժի համայնքապետարան: